Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 մսուր-մանկապարտեզի կահավորում» ծրագիրը.

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան-բարեկարգում» ծրագիրը, որի նպատակն է բարեկարգել և լուսավորել Երևան քաղաքի փողոցները, մի շարք նախակրթական և կրթական հաստատությունների տարածքները.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի բնագիտական լսարանի տեխնիկական վերազինում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի ոռոգման համակարգի վերանորոգման համար խողովակների տրամադրում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի թիվ 3 մանկապարտեզի տանիքի և Արծվաբերդ համայնքի դպրոց տանող աստիճանների վերանորոգում», «Մարզական գույքի մատակարարում Թալինի տարածաշրջանի հինգ համայնքներին», «Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի սպորտային դահլիճի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի գյուղի հիմնական դպրոցի նախադպրոցական խմբակի սենյակների և Գյումրի քաղաքի թիվ 37 դպրոցի սանհանգույցների վերանորոգում», «Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Զեյթուն» պոլիկլինիկայի մասնակի վերանորգում», «Երևանի «Զեյթուն» պոլիկլինիկայի, 159 և 149 մանկապարտեզների և երկու կարիքավոր ընտանիքների համար գույքի ձեռքբերում» և «Փոքր ջերմոցների տրամադրում Կապանի տարածաշրջանի երեք համայնքների և Կապան քաղաքի երեք թաղամասերի 15 ընտանիքների» ծրագրերը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար սառնարանային խցիկի գնում» ծրագիրը.

«ԱՔՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Առողջ և ապահով կյանք» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ և ԼՂՀ-ում բնակվող կարիքավոր անձանց անվճար բուժօգնության տրամադրում, ինչպես նաև ՀՀ բնակիչների կրթում՝ դասավանդելով հակաճգնաժամային տեսական և գործնական հմտություններ.

«Գիրք» հիմնադրամի կողմից իրականացվող «Գրի հավերժություն» ցուցահանդես» ծրագիրը, որի նպատակն է Հայ գրատպության 500-ամյակի հոբելյանի շրջանակներում «Գրի հավերժություն» ցուցահանդեսի կազմակերպում:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: